ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«23» դեկտեմբերի 2021 թ. N 76-Ա

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԿԱՍԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերությամբ, 7-րդ մասով, 35-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի միջնորդությունը, ինչպես նաև քաղաքաշինության բնագավառի գործունեությունների տեսակներով լիցենզավորող հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 15-ի N 24 որոշումը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Համարել կասեցված «Եղվարդ արտադրական բազա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության N 12188 լիցենզիայի գործողությունը:
2. Կասեցման ժամկետ սահմանել մինչև խախտման պատճառի վերացումը:
3. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ Նշան Մարտիրոսյանին՝

համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի՝ սույն հրամանի պատճենը երեք օրվա ընթացքում պաշտոնական հրապարակման համար ուղարկել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

12/23/2021

X

Signed by: GHULARYAN ARMEN 3509540050

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ